



Ազդարարության Trumpet's Sound **փող**

55-րդ ՏԱՐԻ, ԱԲՏՐԱԼԻԱ
ՄԱՐՏ - ԱՊՐԻԼ 2024





Հայ Ավետարանական Եղբայրների Եկեղեցի ARMENIAN EVANGELICAL BRETHREN CHURCH

BI MONTHLY CHRISTIAN PUBLICATION
PUBLISHED BY THE
ARMENIAN EVANGELICAL BRETHREN CHURCH
112 SAILORS BAY ROAD, NORTHBRIDGE,
NSW 2063 Australia

PASTOR HRATSH KIUJIAN
ARMENIAN EVANGELICAL BRETHREN CHURCH
PO BOX 1593, CHATSWOOD NSW 2057
email: pastor@armenianbrethren.org
URL: www.acmaust.org

«ԱԶԳԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՓՈՂ երկամյա թերթը Սիդնեյի Հայ Ավետարանական Եղբայրների Եկեղեցու հրատարակությունն է: Պատասխանատու խմբա՛իր՝ հովիվ Հրաչ Գույունյան:

Այս թերթը անվճար բաժանվում է հայրենիքում: Ցանկացողները կարող են դիմել նշված հասցեով:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ինչո՞ւ խաչը Հովիվ՝ Հրաչ Գույունյան

Տիրոջ երկրորդ գալուստը Պիտեր Բիբի

Հավատքի մասին դասեր՝ Մարկոս 8-րդ գլխից Դոն Սթոքրմ

Հազարամյա սուրբ Քաղաքը (3) ՉՄԵԿ պանորամա

Աստված ամեն ինչ գիտի ձեր մասին Ջորջ Հաուբ

Մեղքերի թողություն Քաղված

Հրեշտակային պատգամաբերը Քաղված

Ձեռքերիս նայելով Թրինա Պահատուրյան

Փորձը ձախողվեց Վեր. Հովսեփ Հովսեփյան

Տիրոջ Հոգին ինձ վրա է Քաղված

Այցելություն Վրաստան Դոկտ.՝ Դանիել Ջեյմս

ԻՆՆՈՐԼ ԽԱՅՐ

Ունանք հարցնում են, թե ով սպանեց Տեր Հիսուսին՝ հրեանե՞րը, թե՞ հռոմեացիները: Սակայն սկզբից Հոր կամքն էր, որ Հիսուսը մահանար: Եսայի 53-րդ գլխում կարդում ենք, որ Նա արհամարհվեց, ծաղրվեց, մերժվեց, վշտի տեր ու ցավի տեղյակ եղավ: Նրա վրա թքեցին, գլխին փշե պսակ դրեցին, խաչին գամեցին, կողը ծակեցին և քացախ տվեցին, որ խմի. Նա չարչարվեց:

Այս ամենն ինձ համար էր: Այսպես եղավ, որ մարդկությունը փրկություն ու մեղքերի թողություն գտնի: Արյունն էր, որ մաքրեց մեզ մեր բոլոր մեղքերից:

Նա կախված մնաց արյունով պատված խաչից՝ ոտքի թաթից մինչև գլուխը ցավով լցված: Մեղավորի հանդեպ Իր սերը զարմացնում է մեզ:

Իր հետ խաչված էր երկու ավագակ. մեկը՝ ձախ կողմից, մյուսը՝ աջ: Նրանցից մեկը ծաղրեց Հիսուսին, իսկ երկրորդը հավատաց և Նրան Տեր անվանեց: Նա ասաց. *«Տե՛ր, հիշի՛ր ինձ, երբ գաս Քո թափափորությամբ»*:

Ի՛նչ զարմանալի հավատք էր, բայց ավելի զարմանալի էր Հիսուսի պատասխանը: Ցավերի մեջ լինելով՝ Նա փափագում էր կորածին գտնել, մեղավորին փրկել: Սա էր աշխարհ գալու Նրա նպատակը: Այո՛, Նա պատրաստ է փրկելու նաև քեզ, եթե ապաշխարությամբ ու հավատքով Իրեն դիմես:

Այս մեղավորին Հիսուսի տված պատասխանը բարձրաձայն արձագանքում է նաև հիմա. Նա ավագակին ասաց. *«Այսօր Ինձ հետ դրախտում կլինես»*: Նրա պատասխանը նույնն է նաև այսօր բոլոր նրանց, որոնք ապաշխարությամբ Իրեն կմոտենան:

Նրա վերջին խոսքերը սրանք էին. *«Հայր, ձեռքերիդ մեջ եմ ավանդում հոգիս»*: Սակայն 3-րդ օրը Հայրը մեռելներից հարություն տվեց Նրան:

Հիսուսը ողջ է, Նա ապրում է, և Նրա շնորհիվ մենք նույնպես հա-
րություն ենք առնելու՝ Իր հետ անցկացնելու ամբողջ հավիտենա-
կանությունը:

Բոլորիդ օրհնյալ Մուրբ Չատիկ եմ մատթում:

Հ. Գ.

Տիրոջ երկրորդ գալուստը

Նոր Կտակարանում Տեր Հիսուսի երկրորդ գալուստի հետ կապ-
ված օգտագործվում են երեք տարբեր բառեր.

1. «**Parousia**» (**pa-roo-see-ah**) - սա նշանակում է Նրա անձնական
ներկայությունը: Սա նշանակում է, որ Նա անձամբ գալու է: Դա վե-
րաբերում է «հափշտակությանը»: Նա անձամբ կգա մեզ համար: Դա
գաղտնի կլինի: Դա անակնկալ կլինի, քանի որ չգիտենք, թե երբ տե-
ղի կունենա:

2. «**Apokalupsis**» (**apo-kal-yoop-sis**) - սա նշանակում է քողը բարձ-
րացնել կամ բացահայտել: Ինչ-որ բան բացահայտել նշանակում է ի
հայտ բերել այն կամ հայտնաբերել: Սա խոսում է այն մասին, որ դա
գաղտնիք չէ, այլ բացահայտ և տեսանելի: Դա վերաբերում է Նրա
հայտնվելուն: Դա բոլորովին նման չէ Parousia-ին:

3. «**Epiphaneia**» (**epi-fahn-ee-ah**) - այս բառը նշանակում է պայ-
ծառություն կամ փառք: Այն օգտագործվում է Տեր Հիսուսի հայտ-
նությունը փառքով նկարագրելու համար: Դա Նրա հայտնվելու ձևին
է վերաբերում: Նա հայտնվելու է Իր փառքով:

Մեր նախորդ սերտողություններում տեսանք, թե ինչպես է Տերը
գալու մեզ համար. գաղտնապես, մեկ ակնթարթում: Մենք իմացանք,
որ դա կոչվում է հափշտակություն:

Աստվածաշունչը նաև խոսում է Զրիստոսի՝ փառքով ու գորությամբ
գալու մասին, ոչ թե գաղտնի, այլ բացահայտ, բոլորի աչքի առաջ: Դա
այն է, ինչ անվանում ենք հայտնություն:

Կող. 3:4-ում ասվում է. «Երբ Քրիստոսը, որ մեր կյանքն է, հայտնվի, այն ժամանակ դուք էլ Նրա հետ փառքով պիտի հայտնվեք»:

Եթե Նրա հետ ենք լինելու, երբ Նա փառքով հայտնվի, ուրեմն ակնհայտ է, որ մինչ այդ պետք է նրա հետ լինեինք: (Մենք արդեն հափշտակված ենք լինելու):

Հափշտակությունն ու հայտնությունը երկու բոլորովին տարբեր իրադարձություններ են: Հափշտակությունը մեզ համար է. այսինքն՝ Հիսուսը գալու է մեզ Իր մոտ վերցնելու: Իսկ հայտնությունը այն է, որ Հիսուսը փառքով հայտնվելու է մեզ հետ, որպեսզի իշխի երկրի վրա:

Սրանց միջև 7 տարվա ժամանակահատված կա, որը կոչվում է Մեծ նեղության ժամանակաշրջան: Մինչ երկրից բացակայելու ենք և Հիսուսի հետ ենք լինելու երկնքում, երկրի վրա սարսափի ժամանակ է լինելու: Իրավիճակը գնալով ավելի ու ավելի կվատթարանա: Քրիստոնյաների և Սուրբ Հոգու զսպող ազդեցությունը կվերանա, և չարությունն ու անօրենությունը վերահսկողությունից դուրս կգան: Աշխարհի թատերաբեմին կհայտնվեն երկու հզոր առաջնորդներ, որոնք կոչվում են «կեղծ մարգարե» և «նեռ», ու կսկսվի Արմազեղոնի պատերազմը: Դա կլինի աշխարհի երբևէ տեսած ամենասարսափելի պատերազմը:

Եկեք ուսումնասիրենք այս վերջին իրադարձությունը: Հայտնությունն. սա տեղի կունենա Մեծ նեղության յոթնամյա շրջանի վերջում:

«Ահա, Նա գալիս է ամպերով, ու ամեն աչք տեսնելու է Նրան» (Հայտ. 1:7):

«Տե՛ր Հիսուսը հայտնվի Իր գորսալոր հրեշտակներով, բորբոքված կրակով վրեժ առնելու նրանցից, ովքեր չեն ճանաչում Աստծուն և չեն հնազանդվում մեր Տե՛ր Հիսուս Քրիստոսի ավետարանին. որոնք պիտի պատժվեն հավիտենական կորստով՝ Տիրոջ ներկայությունից ու Նրա գորության փառքից...» (Բ Թեա. 1:7-9):

«Այն ժամանակ Մարդու Որդու նշանը պիտի երևա երկնքում, և երկրի բոլոր ազգերը պիտի ողբան ու պիտի տեսնեն Մարդու Որդուն երկնքի ամպերով գալիս՝ գորությանը ու մեծ փառքով: Եվ Նա պիտի ու-

դարկի Իր հրեշտակներին մեծ գոյունով ու փողով, և պիտի հավաքեն Նրա ընտրյալներին աշխարհի չորս հողմերից՝ երկնքի մի ծայրից մինչև մյուսը» (Մատթ. 24:30-31):

Հիսուսն Իր հրեշտակներին ուղարկելու է ամբողջ երկրով մեկ՝ հավաքելու Իր ժողովրդին: Ենթադրվում է, որ այստեղ խոսքը Իսրայելի մասին է, Պաղեստինի երկրում: Ամբողջ երկրից նրանք կհավաքվեն՝ ողջունելու իրենց Մեսիային և վայելելու Նրա փառահեղ թագավորությունը: Տեր Հիսուսի համար սա գազաթնակետն է: Ինչպես Հովսեփը Ծննդ. 45:4-7-ում, Նա հաշտվելու է Իր եղբայրների հետ: Իսրայելը կրկին կլինի Նրա օրհնության և խնամքի տակ:

«Երբ Մարդու Որդին գա Իր փառքով և բոլոր սուրբ հրեշտակները Նրա հետ, այն ժամանակ Նա կնստի Իր փառաց պառոնին» (Մատթ. 25:31):

Ինչ հրաշալի պահ է լինելու: Նա, ում վրա թքեցին և խաչեցին, փառքով արդարացվելու է որպես կյանքի Տեր: Հեզ ու խոնարհ Հիսուսը հայտնվելու է որպես Եհովա: Չոհարեոված Գառնուկը հայտնվելու է որպես հաղթող առյուծ: Արհամարհված նագովրեցի ատաղձագործը գալու է որպես թագավորների Թագավոր և տերերի Տեր: Նա գալու է թագավորական գորությանը և շքեղությանը: Սա այն պահն է, որին արարչագործությունը սպասում է հազարավոր տարիներ:

Հիսուսը կհաստատի Իր թագավորությունն արդարությամբ և խաղաղությամբ, և մենք Նրա հետ կլինենք, երբ Նա գա:

Լույսի և գորության շլացուցիչ փայլով Տեր Հիսուսը երկնքից կհայտնվի բոլոր քրիստոնյաների հետ, և բոլորը կտեսնեն Նրան: Նա կառաջնորդի Երկնային բանակը և հաղթական կերպով կավարտի պատերազմը՝ ազատելով հրեաներին բնաջնջումից և ոչնչացնելով պատերազմող ժողովուրդներին:

Համաշխարհային երկու առաջնորդները կբռնվեն ու կնետվեն կրակի ու ծծումբի լճի մեջ: Սատանան 1000 տարով կկապվի և կփակվի մի վայրում, որն Աստվածաշունչն անվանում է «անդունդ»: Այս շրջանը հայտնի է որպես Հազարամյակ: Տեր Հիսուսը կհաստա-

տի Իր թագավորությունը և երկրի վրա կթագավորի 1000 տարի՝ որպես թագավորների Թագավոր և տերերի Տեր (Մատթ. 24:27-31, Մատթ. 25:31-32, Հայտ. 19:11-20:3):

Հիտուսը կթագավորի երկրի վրա արդարությամբ և խաղաղությամբ: Աշխարհը և նրա բնակիչները վերջապես կգտնեն անհամեմատելի թագավորություն, որի մասին նրանք կարող էին միայն երազել: Մարդիկ խաղաղ կապրեն իրար հետ: Կենդանիները և այլ կենդանի էակներ միասին կխաղան: Անպտուղ հողերը կդառնան բերրի: Մեղքը, անհնազանդությունը և մահը բացառություն կլինեն, քանի որ այս ժամանակահատվածում սատանան պարտված կլինի և անգործ կմնա: (Եսայի 11:1-9, Եսայի 35:1-10, Հայտ. 20:3):

Տեր Հիտուս Քրիստոսի թագավորության ժամանակ բոլոր քրիստոնյաները թագավորելու են Նրա հետ: Նրա հետ թագավորելու ընթացքում մեր պարտականությունները պայմանավորված կլինեն մեր այսօրվա ծառայությամբ: Մենք կտեսնենք, թե ինչպես է ամբողջ աշխարհն ընդունելու Նրան՝ որպես թագավորների Թագավորի և տերերի Տիրոջ՝ պատվելով և հռչակելով Նրան՝ որպես օրինական կառավարչի: Հուզիչ կլինի տեսնել, թե ինչպես է աշխարհը հիանալու և ողջունելու Տեր Հիտուսին, մինչդեռ այսօր շատերը ծաղրում ու մերժում են Նրան: Նա, ով խաչվեց, Թագավոր կդառնա: Նա, ով այսօր մերժվում է, թագավորելու է ամբողջ երկրի վրա:

Քրիստոսի հայտնությունը սարսափելի իրադարձություն կլինի նրանց համար, ովքեր մերժել են Նրան: Մեծ նեղության ժամանակաշրջանի ավարտին երկնքում սարսափելի ցնցումներ կլինեն: Արևը կխավարի, և քանի որ Լուսնի լույսը միայն արևի արտացոլումն է, Լուսինը նույնպես լույս չի ունենա: Աստղերը կընկնեն երկնքից, մոլորակները՝ իրենց ուղեծրերից: Տիեզերական աղետները կանդրադառնան երկրի եղանակի, մակընթացությունների վրա (Մատթ. 24:29):

Հայտ. 19:11-16-ը նկարագրում է, թե ինչ կլինի, երբ Հիտուսը գա երկիր՝ ջախջախելու Իր թշնամիներին և հաստատելու Իր թագավորությունը: Աստվածաշնչում այդ օրը կոչվում է «Տիրոջ օր»:

Ոչինչ չի կանգնելու Նրա ճանապարհին. «Կհայտնվի այն Անօրենը, որին Տերը պիտի սպառի Իր բերնի շնչով ու կործանի Իր գալստյան պայծառությամբ» (Բ Թեա. 2:8): Նույնիսկ Նեռը կտապավի Քրիստոսի թագավորական գալուստի ժամանակ:

Հազարամյակից հետո սատանան կարճ ժամանակով կազատվի անդունդից՝ ազգերին փորձելու համար: Նա ապստամբություն կբարձրացնի Քրիստոսի դեմ, բայց այդ ապստամբող ազգերը կդատապարտվեն, և սատանան կնետվի Կրակե լիճը՝ դժոխք:

Բոլոր նրանք, ովքեր երկրի վրա մերժեցին Աստծուն ու չընդունեցին Տեր Հիսուսի՝ խաչի վրա մեր մեղքերի համար մահանալու շնորհիվ տրված հավիտենական կյանքի ձրի պարգևը, դատվելու են Մեծ սպիտակ աթոռի առջև: Եթե ինչ-որ մեկի անունը գրված չլինի Կյանքի գրքում, նա նույնպես կնետվի դժոխք (Հայտ. 20:15):

Այնուհետև կարդում ենք Հայտ. 21-22-րդ գլուխները, որտեղ զբրված է, որ երկրի վրա Հիսուսին ընդունողները Հին Կտակարանի սրբերի հետ մեկտեղ հավիտյան ապրելու են Երկնքում Աստծո և Տեր Հիսուս Քրիստոսի հետ:

Երկրի վրա թագավորելու է արդարությունն ու խաղաղությունը: Կենդանի հրեաները (Իսրայելը) կվերադառնան իրենց երկիր ու իրենց Տիրոջը, և երկիրը նորից կծաղկի, քանի որ մեղքի անեծքը կհանվի դրանից: Մեղքից ազատված երկիրը առատ կլինի անհամար օրինություններով:

Երկնքում փրկագնվածների երգերը կլցնեն երկինքը: Հարսը և Քրիստոսը հավիտենապես միասին կլինեն փառքի մեջ: Այդ ժամանակ բոլոր սրտերը կբավարարվեն: Արդյո՞ք դուք այնտեղ կլինեք:

Աստված չի բավարարում մահից հետո կյանքի վերաբերյալ մեր բոլոր հետաքրքրասիրությունները: Գուցե դեռ ունեք հարցեր, որոնց պատասխանը չեք ստացել: Աստվածաշունչը մեզ բավականաչափ տեղեկատվություն է տալիս՝ ապագայի մասին հստակ պատկերացում կազմելու համար: Մենք պետք է վստահենք մեր Երկնային Հորը և հանձնենք մեր ապագան Նրա ձեռքերի մեջ:

Շատ շուտով Նա կվերադառնա: Ուստի թող մեզանից յուրաքանչյուրը համոզված լինի, որ պատրաստ է Նրան դիմավորելու: Եկե՛ք նաև անհամբեր սպասենք Նրա վերադարձին, որովհետև Հիսուսը նորից գալու է, և դրանում կասկած չկա:

Պիտեր Բիբի

Հավատքի մասին դասեր՝ Մարկոս 8-րդ գլխից

Մարկ. 8:22-26-ում արձանագրված է մի շատ հետաքրքիր. հրաշք մարդու մասին, որի տեսողությունը երկու փուլով վերականգնվեց: Տիրոջ սկզբնական գործողություններից հետո կույրը կարողացավ տեսնել մարդկանց, որոնք կարծես քայլող ծառեր լինեին: Հիսուսը նորից ձեռքերը դրեց նրա աչքերին, և նա կարողացավ հստակ տեսնել: Ինչո՞ւ Տերը երկու փուլով կատարեց այս հրաշքը: Միջադեպը միայն հրաշք չէր, այլ նաև առակ էր: Երբ կարդում ենք այս գլխի մյուս պատմությունները, հասկանում ենք, որ կային բազմաթիվ ճշմարտություններ, որոնք հասկանալու առումով կույր էին և՛ աշակերտները, և՛ Տեր Հիսուսի հակառակորդները: Նրանց վրա փուլ առ փուլ լույս ծագեց: Աշակերտները և մյուսները միշտ չէ, որ հասկանում էին այն ճշմարտությունը, որը Տերը սովորեցնում էր:

4000-ին կերակրելը (1-9): Մարդկանց ամբոխը հետևում էր Տիրոջը՝ լսելու Նրա ուսմունքը: Երեք օր անց նրանք ուտելիք չունեին: Տերն Իր կարեկցությամբ չուզեց ժողովրդին քաղցած տուն ուղարկել, որ հանկարծ ճանապարհին ուշագնաց չլինեն: Բայց երբ խոսեց Իր աշակերտների հետ, նրանք միայն խնդիրները տեսան. անապատում էին, որտեղի՞ց պիտի գտնեին այդքան սնունդ այդ բազմությանը կերակրելու համար: Չարմանալի է, որ աշակերտները նման հարց տվեցին, չէ՞ որ արդեն ականատես էին եղել 5000-ին կերակրելուն: Մի՞թե ունեին Տեր Հիսուսի գորության նկատմամբ սահմանա-

փակ հավատք: Մի՞թե նրանց մտքով չէր անցնում, որ 5000-ին կերակրողը կարող է նաև 4000-ին էլ կերակրել: Իսկ ի՞նչ ասենք մեր մասին: Արդյոք սահմանափակում ենք Տիրոջ գործությունը, իսկապես հավատում ենք, որ Նա ամենակարող է:

Փարիսեցիները նշան են փնտրում (10-13): Երբ Տերը 4000-ին կերակրելուց հետո Դաղմանուբա հասավ, փարիսեցիները խնդրեցին, որ Նա երկնքից նշան ցույց տա իրենց: Նրանք հավանաբար հույս ունեին, որ Նա ակնառու հրաշք կկատարի իրենց աչքի առջև՝ ապացուցելու, որ Ինքը Մեսիան է: Մենք զարմանում ենք նրանց շարության ու անհավատության վրա: Տերն արդեն շատ նշաններ ցույց էր տվել, որոնցով ապացուցել էր Իր՝ Մեսիա լինելը և Իր՝ Երկնքից գալը: Պատճառ չկար, որ մնային իրենց անհավատության մեջ: Տերը հավելյալ նշան ցույց չէր տա անհավատ մարդկանց: Եվ ամենայն հավանականությամբ նշանը ոչ մի տարբերություն չէր առաջացնի նրանց մոտ: Այս մարդիկ արդեն որոշել էին չհավատալ:

Արդյո՞ք այսօրվա աշխարհը տարբերվում է: Որոշ մարդիկ ուզում են հրաշալիքներ տեսնել նախքան հավատալը: Բայց մենք Տեր Հիսուսին հավատքով ենք մոտենում: Արարչագործության մեջ բավարար ապացույցներ կան, որպեսզի իմանանք, որ Աստված գոյություն ունի, և պետք է հնազանդվենք Նրան: Այդ ապացույցը նաև վառ է Տեր Հիսուսին հավատացող մարդկանց փոխված կյանքերում:

Փարիսեցիների թթխմորը (14-21): Փարիսեցիներից հեռանալուց հետո Տերն Իր աշակերտների հետ նավ մտավ՝ Գալիլիայի ծովն անցնելու համար: Աշակերտները մոռացել էին հաց վերցնել: Տերը նրանց պատվիրեց, որ զգուշանան փարիսեցիների և Հերովդեսի թթխմորից: Եվս մեկ անգամ աշակերտներն ապացուցեցին, որ դեռ շատ բան ունեն սովորելու: Նրանց համար թթխմորը պարզապես հաց էր, և նրանք կարծում էին, որ Տերը հանդիմանում է՝ իրենց հետ հաց չվերցնելու համար:

Տերը համբերատար բացատրեց Իր ասածը: Թեև աշակերտներն ընդամենը մեկ հաց ունենային, նրանք պետք է հասկանային, որ սա խոչընդոտ չէր իրենց Տիրոջ համար. Նա քչից շատ բան կարող էր անել՝ նկատի ունենալով փարիսեցիների ուսմունքից զգուշանալը,

քանի որ փարիսեցիներն իրենց կրոնական գործերը ցուցադրում էին, բայց իրականում կեղծավոր էին: Իրենց նվիրվածությունն Աստծո հանդեպ կեղծ էր, և նրանց բոլոր արարքները ուշադրություն զրավելու համար էին, որպեսզի մարդիկ իրենցով հիանային: Իրականում նրանք հասարակության գովասանքն ու հարգանքն էին փնտրում: Եթե մենք քրիստոնյա ենք, ապա մեր խոսքով ու գործով պետք է Աստծուն պատվենք, պետք է փառքը Նրան տանք, մեզ վրա ուշադրություն չպետք է հրավիրենք:

Պետրոսի խոստովանությունը (27-33): Տերն Իր աշակերտների հետ դեպի հյուսիս գնաց՝ Փիլիպպեի՝ Կեսարիայի շրջակայք: Ճանապարհորդության ժամանակ Նա հարցրեց, թե մարդիկ ինչ են ասում Իր մասին: Պատասխանները տարբեր էին. Հովհաննես Մկրտիչն է, Եղիան կամ Երեմիայի նման մարգարեներից մեկը: Երբ Տերը հարցրեց, թե նրանք ինչ են մտածում Իր մասին, Պետրոսն անմիջապես պատասխանեց, որ Նա Քրիստոսն է՝ Մեսիան:

Մենք գիտենք, որ աշակերտները մտածում էին, թե իրենցից ով ինչ պաշտոն է զբաղեցնելու, երբ Մեսիան հիմնի Իր թագավորությունը: Ուստի ժամանակն էր նրանց բացատրելու այն, ինչը շուտով կատարվելու էր: Կատարվելիքը նրանց պատկերացումներին համապատասխան չէր: Տերը խոսեց այն մասին, որ մերժվելու է երեցների կողմից և մահանալու է նրանց ձեռքով:

Պետրոսը չուրախացավ իր լսածով: Նա հանդիմանեց Հիսուսին՝ ասելով, թե քավ լիցի, որ այդպիսի բան պատահի Նրա հետ: Տերն Իր հերթին ստիպված էր շատ ուղիղ կերպով հանդիմանել Պետրոսին. *«Ետև՛ս անցիր, սատանա՛, դու գայթակղություն ես Ինձ համար, որովհետև դու ոչ թե Աստծո բանեղն ես խորհում, այլ մարդկանց»*: Այնքան հեշտ է ունենալ սեփական օրակարգը և կապ չունենալ Աստծո մտքի ու կամքի հետ:

Վերցրո՛ւ խաչը (34-38): Տերն Իր աշակերտների համար շատ կարևոր ուղերձ ուներ: Եթե նրանք մտադիր էին Նրան հետևել, ապա պետք է վերցնեին խաչը ու Նրան հետևեին: Մեր օրերում այս արտահայտությունը քիչ նշանակություն ունի: Շատերը կարծում են, թե խաչը վերցնել նշանակում է անհարմարության հետ համակերպ-

վել: Սակայն Հռոմեական կայսրության մեջ խաչը վերցնելը միայն մեկ բան էր նշանակում. խաչ կրողը մեռնելու ճանապարհին է: Եվ երբ խաչն ավարտեր իր գործը, այդ մարդը մահացած կլիներ: Քրիստոսին հետևել նշանակում է վերցնել խաչը, մեռնել «ես»-ի ու մարմնի բոլոր հին ցանկությունների համար, ինչը նշանակում է ապրել միայն Քրիստոսի համար:

Ի՞նչ պետք է անենք: Մեզանից ոմանք կարող են նմանվել այս մարդկանց, որոնց մասին կարդացինք, և Տեր Հիսուսին հետևելու մասին շատ սխալ պատկերացումներ ունենալ: Մենք կարող ենք մտածել, որ պետք է սրբության որոշակի չափանիշի հասնենք նախքան քրիստոնեական կյանքն սկսելը: Բայց սեփական ուժով չենք կարող փոխել մեր կյանքը:

Ուստի պետք է Քրիստոսի մոտ գանք ապաշխարությամբ և հավատքով ու ներողություն խնդրենք Նրանից մեր մեղքերի համար: Եթե արդեն հավատում ենք Նրան, ապա պետք է ամեն օր գանք Նրա մոտ և փնտրենք Նրա առաջնորդությունը, կարդանք Նրա Խոսքը, որպեսզի աճենք շնորհքի և հավատքի մեջ:

Դոն Սթոյմր

«¹¹ Սիրելիներ՛ր, աղաչում եմ, որպես պանդուխտներ ու օտարականներ հեռու՝ մնացեք մարմնավոր ցանկություններից, որոնք պատերազմում են հոգու դեմ. ¹² հեթանոսների մեջ ձեր վարքը բարի պահելով, որպեսզի եթե ձեզ բամբասեն իբրև չարագործների, ձեր բարի գործերը տեսնելով՝ փառավորեն Աստծուն Նրա այցելության օրը: ¹³ Ուստի՝ հանուն Տիրոջ, հնազանդ եղեք մարդկային բոլոր օրենքների. թե՛ թագավորին՝ որպես գերագույն մեկի, ¹⁴ թե՛ կուսակալներին՝ որպես Նրա կողմից չարագործներին պատժելու և բարին գործողներին գովելու համար ուղարկվածների: ¹⁵ Քանի որ Աստծո կամքն է սա, որ բարի գործերով՝ պապանձեցնեք հիմար մարդկանց տգիտությունը. ¹⁶ ազատների պես, ո՛չ թե ձեր ազատությունը որպես չարության ծածկոց գործածեք, այլ՝ Աստծո ծառաների նման»:

Ա Պետ. 2:11-16

Հազարամյա սուրբ քաղաքը, Կենաց գետը և վերջին պատգամներ (3)

Հովհաննեսի տեսիլքներից 600 տարի առաջ Դանիել մարգարեին ասվեց. «Փակի՛ր այս խոսքերն ու գիրքը կնքի՛ր մինչև վերջին ժամանակը» (Դան. 12:4, տե՛ս նաև 12:9-ը): Բայց Հովհաննեսի օրերում վերջին ժամանակը շատ ավելի մոտ էր: Նրան ասվեց. «Այս գրքի մարգարեության խոսքերը մի՛ կնքիր, որովհետև մոտ է ժամանակը» (Հայտ. 22:10): 1900 տարի է անցել այն պահից, երբ այդ խոսքերը տրվեցին Հովհաննեսին: Որքա՛ն մոտ պետք է լինի վերջին ժամանակը:

Այսօր մարդիկ կարող են ընտրել Հիսուս Քրիստոսի Բարի լուրին հավատալը կամ մերժելը: Բայց շուտով մոտենում է այն օրը, երբ նրանք կկորցնեն ընտրելու ազատությունը, որն այժմ ունեն: Նրանց բարոյական վիճակն Աստծո առջև հավիտյան հաստատուն կմնա: Թերևս սրա մասին է Հովհաննեսին ասվում Հայտ. 22:11-ում. «Նա, ով անիրավ է, թող այլևս անիրավ լինի, նա, ով կեղտոտ է, թող այլևս կեղտոտ լինի, նա, ով արդար է, թող այլևս արդար լինի, ու նա, ով սուրբ է, թող այլևս սուրբ լինի»:

Ահա Տեր Հիսուսը կրկին հայտարարում է Իր մոտալուտ գալուստը. «Ահա, Ես շուտով կգամ և, Իմ վարձը Ինձ հետ է, որ յուրաքանչյուրին հատուցեմ Իր գործերի համեմատ» (հմր 12): Այնուհետև Նա վերագրում է Իրեն աստվածային տիտղոսներ, որոնցից երկուսն արդեն օգտագործել է. «Ես եմ Ալֆան և Օմեգան՝ սկիզբը և վախճանը, առաջինը և վերջինը» (հմր 13): Այս աստվածային տիտղոսներին որոշ մանրամասնությամբ անդրադարձել ենք 49-րդ դասի 4-րդ բաժնում:

9. ՎԵՐՋԻՆ ՊԱՏԳԱՄՆԵՐ (22:14-21)

Այժմ դիտարկելու ենք Հայտնության ութ երանելիներից վերջինը: Դա վերաբերում է այն հիմքին, որով կարող ենք Երկնային քաղաք մտնելու արտոնություն ունենալ: Երբ հավատում ենք Տեր Հիսուս Քրիստոսին և ընդունում Նրան՝ որպես Փրկչի և Տիրոջ, հավիտենա-

կան կյանքն ենք ստանում (Հովի. 3:16, 5:24): Հայտնության գրքի սիմվոլիկան օգտագործելով կարելի է ասել, որ մենք լվանում ենք մեր պատմութեանները և սպիտակեցնում դրանք Գառան արյամբ (տե՛ս Հայտ. 7:14-ը): Ահա կարդում ենք. «*Երանելի են նրանք, որ պահում են Նրա պատվիրանները. որ իրավունք ունենան կենաց ծառին մոտենալու և դարպասներով քաղաքը մտնելու*» (Հայտ. 22:14):

Նոր երկնքի ու նոր երկրի մասին քննարկելիս դիտարկեցինք ութ խմբեր, որոնք դուրս մնացին (տե՛ս Հայտ. 21:8-ը): Նմանապէս, Քաղաքից դուրս մնացածները դասակարգվում են վեց խմբերի (տե՛ս Հայտ. 22:15-ը): Այս երկու կատեգորիաների մեջ ընդհանուր է հինգ խումբ՝ մարդասպանները, պոռնիկները, կախարդությամբ զբաղվողները, կռապաշտները և բոլոր ստախոսները: Բայց ներկայումս, քանի դեռ այդ օրը չի եկել, բոլոր անհավատները կարող են լվացվել, սրբանալ և արդարանալ (տե՛ս Ա Կորնթ. 6:9-11-ը):

Այնուհետև կարդում ենք Տեր Հիսուսի շուրթերից դուրս եկած մի հրաշալի հայտնություն. «*Ես՝ Հիսուս՝ Իմ հրեշտակին ուղարկեցի, որ այս բաները վկայի եկեղեցիների մեջ: Ես Դավթի արմատն ու սերունդն եմ ու Առավոտյան պայծառ աստղը*» (Հայտ. 22:16): Դավթի արմատը վերաբերում է Հիսուսին՝ որպէս Դավթի կյանքի ու սերնդի աղբյուրի: Նա Դավթի Արարիչն ու Տերն է: Դավթի սերունդը վերաբերում է Հիսուսի մարդեղությանը: Նա եկավ Դավթի տոհմից և կոչվեց Դավթի Որդի (տե՛ս Դուկ. 3:31-ը):

Մեզանից շատերը վաղ առավոտյան տեսել են Վեներա մոլորակը: Մենք այն անվանում ենք առավոտյան աստղ: Քանի որ աստղերը մարում են լույսը բացվելուն պես, իսկ Վեներան, կարծես, ավելի պայծառ է վառվում: Այսպէս է լինելու, երբ Տեր Հիսուսը գա Իրեններին հափշտակելու: Նա կգա լուսաբացից առաջ՝ որպէս առավոտյան պայծառ աստղ՝ իրեններին փրկելու (տե՛ս Մաղ. 4:2-ը):

Տեր Հիսուսն արդեն երկու անգամ հայտարարեց, որ շուտով գալու է, և որ գալու է որպէս առավոտյան պայծառ Աստղ: Հոգու և երկար սպասող հարսի պատասխանը լինելու է. «*«Արի՛»: Եվ նա, ով լսում է, թո՛ղ ասի. «Արի՛»: Ու նա, ով ծարսվ է, թո՛ղ գա, և նա, ով ուզում է կենաց ջուրը, թո՛ղ ձրի վերցնի»* (հմբ 17): Սա Ավետարանի վերջին կոչն

է և ներառում է բոլոր նրանց, ովքեր ցանկանում են գալ: Այն մեզ հիշեցնում է տասը կույսերի առակի կեսգիշերային աղաղակը. «*Ահա՛ փեսան գալիս է, դո՛ւրս եկեք նրան դիմախորեղու*» (Մատթ. 25:6):

Այնուհետև կարդում ենք շատ խիստ նախազգուշացում՝ չաղավաղել այս գրքի մարգարեության խոսքերը. «*Քանի որ Ես վկայում եմ ամեն մարդու, որ լսում է այս գրքի մարգարեության խոսքերը: Եթե մեկը սրանց վրա որևէ բան ավելացնի, Աստված էլ նրա վրա ավելացնելու է այն պատուհասները, որոնց մասին գրված է այս գրքում: Եվ եթե մեկն այս մարգարեության գրքի խոսքերից մի բան պակասեցնի, Աստված էլ պակասեցնելու է նրա բաժինը Կենաց գրքից, սուրբ քաղաքից և այն բաներից, որոնց մասին այս գրքում գրված է» (հմր 18-19): Ուշադրություն դարձրեք. նրանք, ովքեր իրենց պատմունքները լվացին (նրանք, ովքեր իրենց հոգևոր մաքրման համար վստահեցին Քրիստոսի արյանը), իրավունք ունեն Կենաց ծառից օգտվելու և Քաղաք մուտք գործելու (հմր 14): Իսկ մարգարեության այս գիրքն աղավաղողների բաժինը անհավատների հետ կլինի: Որքան լուրջ է այս կամ Սուրբ Գրքի որևէ այլ գրքի աղավաղումը:*

Այնուհետև կարդում ենք Տեր Հիսուսի երրորդ և վերջին հայտարարությունը. «*Այո՛, շուտով Ես կգամ*»: *Ամեն՛ն, արի՛, Տեր Հիսուս*» (հմր 20): Եվ մի կարճ օրհնության խոսքերով ընդմիշտ փակվում է Սուրբ Գրքի կանոնը. «*Մեր Տեր Հիսուս Քրիստոսի շնորհը ձեզ բոլորիդ հետ լինի: Ամեն՛ն*» (հմր 21):

10. ԿՐԿՆՈՒԹՅՈՒՆ

Այս դասաշարի վերջին սերտողությամբ կետրոնացանք Սուրբ քաղաքի՝ Երուսաղեմի գերագանց փառքի վրա, որը տիրելու է երկնքի ու երկրի վրա Մեծ նեղության սարսափելի դատաստաններից անմիջապես հետո: Կատարյալ օրենքն ու կարգուկանոնը նորից կհաստատվեն, որովհետև այդ օրը «*Տերը Թագավոր պիտի լինի ամբողջ երկրի վրա*» (Չաք. 14:9):

Գառան հարսանեկան ընթրիքը տեղի է ունենալու երկնքում, և Գառան կինը այժմ հրապարակայնորեն ցուցադրվում է որպես «*Սուրբ Երուսաղեմը, որ երկնքից՝ Աստծուց էր իջնում*» (Հայտ. 21:10): Դողոս

առաքյալը գրեց «Իր առջև ներկայացնի որպէս փառավոր եկեղեցի՝ առանց արատի, խորշումի, կամ այլ թերութեան, այլ սուրբ և անարատ լինի» (Եփես. 5:27): Եվ այժմ Սուրբ Քաղաքի ներսից եկեղեցին ճանաչում է Քրիստոսի փառքն աշխարհին:

Մենք նշեցինք, որ Հազարամյակի ընթացքում երկրի վրա տաճար կլինի, բայց Սուրբ քաղաքում տաճար չի լինի, քանի որ Ամենակարող Տէր Աստվածը և Գառը կլինեն նրա տաճարը, և Նրանք անընդհատ լույս կտան, որպեսզի այնտեղ երբեք գիշեր չլինի: Եվ երկրի վրա գտնվող ազգերը այնտեղ կբերեն իրենց պատիվն ու փառքը:

Մենք փորձեցինք հասկանալ Սուրբ քաղաքի հսկայական չափերը՝ քաղաքի հիմքի տարածքը համեմատելով Ավստրալիա մայրցամաքի հետ: Բայց նաև գիտենք, որ քաղաքը կունենա 2400 կիլոմետր բարձրություն, որը 270 անգամ ավելի բարձր է Էվերեստից:

QMBC պանորամա

Աստված ամեն ինչ գիտի ձեր մասին և տակավին սիրում է ձեզ

Ինչ էք կարծում, ուրիշների հետ հաղորդակցվելու ժամանակ որքա՞ն պետք է ծածկեք ձեր ինքնությունն ու մտքերը: Իհարկե, «ուրիշներ» ասելով՝ կարող ենք հասկանալ զանազան խմբեր՝ սկսած ընկերական հարթակների շփումներից մինչև մեր ամենամտերիմ ընկերները կամ ընտանիքի անդամները: Կա՞ մեկը, ում հետ իսկապես կարող էք անկեղծ լինել, մեկը, ում հետ կարող էք բաժնեկցել ձեր խոցելի կողմերը, ում հետ կարող էք խոսել ձեր ամենախորը պայքարի մասին:

Շատ վաղ տարիքից գիտենք, որ ցավոտ հույզերն ու մտքերը բաժնեկցելիս անհարմար ենք զգում: Մեր խոցելի կողմերը բացահայտե-

լուց հետո մերժվելու, դատապարտվելու կամ շահագործված լինելու զգացումն աներևակայելիորեն ծանր է շատերիս համար:

Աստված ամեն ինչ գիտի ձեր մասին. ոչ միայն այն ամենը, ինչ երբևէ արել եք, այլև այն ամենը, ինչ երբևէ ցանկացել եք անել, յուրաքանչյուր միտք, զգացում, փափագ: Իսրայելի Դավիթ թագավորն ասել է. *«Ո՛վ Տեր, ինձ քննեցիր ու նանաչեցիր... Իմ էությունը չի ծածկվել քեզանից, երբ գաղտնի տեղում շինվում էի, երկրի ցածրագույն մասերում նարտարությունք կազմվում էի»* (Սաղ. 139:1, 15):

Արդյո՞ք սա սարսափեցնում է ձեզ: Արդյո՞ք սա ծածկվելու, ձեր անձը պաշտպանելու կամ անկախանալու փափագ է առաջացնում ձեր մեջ: Բայց... Աստված ամեն ինչ գիտի ձեր մասին և տակավին սիրում է ձեզ: *«Աստված Իր սերը մեզ հայտնեց դրանով, որ երբ մենք դեռ մեղավոր էինք, Քրիստոսը մեռավ մեզ համար»* (Հռոմ. 5:8):

Այստեղ հարաբերությունների երկակիություն կա, որը հաճախ դժվարանում ենք ըմբռնել: Այո՛, Աստված մեղավոր է հայտարարում մարդկանց: Նա պարզապես չի նայում մեր վատ արարքներին ու մրմնջալով ասում. «Ամեն ինչ լավ է», կամ «Ես գիտեմ, որ դու իրականում դա նկատի չունեիր»: Նա տեսնում է ամեն ինչ, գիտի և տակավին սիրում է մեզ:

Արդյո՞ք զգացել եք այդ սիրո խորությունը: Մա այնպիսի խորություն է, որտեղ ոչինչ չպետք է ծածկել: Դուք ոչինչ չեք կարող ծածկել և անկախ ամեն ինչից՝ տակավին սիրված ու ապահով եք: Արդյո՞ք պատկերացնում եք Աստծո հետ այս մտերիմ հարաբերությունը: Քանի որ Տեր Հիսուսն Իր մահով վճարեց ձեր մեղքի պարտքը, և քանի որ Աստված գիտի ձեր մասին ամեն ինչ, դուք կարող եք ձեր բոլոր զգացումները հայտնել Աստծուն և Նրա հետ խոսել ձեր ամենախոր պայքարների մասին ու կիսվել ձեր ամենացավոտ հույզերով վստահ լինելով, որ Նա սիրում է ձեզ:

Արդյո՞ք ուզում եք ունենալ այս ապահով ու մտերիմ հարաբերությունը տիեզերքի Աստծո հետ: Դուք կարող եք դիմել Նրան հենց հիմա:

Քաղված՝ Ջորջ Հաուքի բլոգից

<https://georgesjournal.net>

Մեղքերի թողություն

«Արդ ձեզ թող հայտնի լինի, մարդի՛կ, եղբայրներ՛ր, որ այս Մարդու միջոցով մեղքերի թողություն է ավետարանվում ձեզ» (Գործք 13:38):

1887 թվականին Վիկտորյա թագուհին համաներում շնորհեց բրիտանական բանակի բոլոր ուխտադրուժ դավաճաններին: Հրամանը սկսվում էր այսպիսի խոսքերով. «Նրանց, ում վերաբերում է սա...»: Որպես կանոն դավաճաններին սպասվում էր դաժան պատիժ: Ծատերը վստահեցին թագուհու խոսքին և այլևս չէին թաքնվում՝ այս մեծ ներումը ստանալու համար:

Այսօրվա համարում գրված են Պողոս առաքյալի խոսքերը, որ ասել է Անտիոքի ժողովարանում: Պողոսի հայրենակիցներից քչերը հավատացին նրա ասածներին: Հրեաները համարում էին, թե Հիսուս Քրիստոսի միջոցով ներում ստանալու մասին լուրը չէր վերաբերում իրենց: Այդուհանդերձ բազմաթիվ հեթանոսներ ուրախությամբ ընդունեցին ավետիսը:

Իրականում ո՞ւմ է վերաբերում Աստծո ավետիսը ներման մասին: Յուրաքանչյուրը պետք է զգա, որ այն վերաբերում է անձամբ իրեն, քանի որ չկա մեկը, որ իր հանցանքների ներման կարիքը չունի: Դրա համար մենք պետք է դադարենք Աստծուց մեր մեղքերով հանդերձ թաքնվելուց և ընդունենք Նրա առաջարկը, ինչպես դա արեց Դավիթն իր աղոթքում. *«Ո՛վ Տեր, Քո գայրույթով ինձ մի՛ հանդիմանիր ու խիստ վրդովմունքիդ մեջ ինձ մի՛ խրատիր... Քանի որ հանցանքներս գլխիցս վեր բարձրացան, ծանր բեռան պես խիստ ծանր են ինձ համար: Քանի որ հանցանքս կհայտնեմ ու մեղքիս համար ցավում եմ: Ծռասպի՛ր ինձ օգնության հասնելու, ո՛վ Տեր, իմ փրկություն» (Մադ. 38):* Հիշե՛ք, որ «համաներումը» անժամկետ չէ: Այսօր Աստծո՝ շնորհն ընդունելու առաջարկը դեռ գործում է, սակայն ի՞նչ է լինելու վաղը: Աստծո Խոսքն ասում է. *«Հաղվա վերաբերյալ մի՛ պարծենա, քանի որ չգիտես, թե օրն ինչ է բերելու» (Առակ. 27:1):*

Քաղված

Յրեշտակային պատգամաբերը

Չմեռային մի ցուրտ օր փոքրիկ տղան հագավ իր հագուստները ու հորն ասաց.

- Հայրի՛կ, ես պատրաստ եմ:

Հայրը եկեղեցու հովիվն էր: Նա որդուն ասաց.

- Ինչի՞ն ես պատրաստ:

- Ժամանակն է փողոց դուրս գալ ու մեր թերթիկները բաժանել, - ասաց փոքրիկ տղան:

Հայրը պատասխանեց.

- Տղա՛ս, դրսում ցուրտ է և անձրևոտ:

Տղան զարմացած նայեց հորը ու ասաց.

- Բայց, հայրի՛կ, մարդիկ նույնիսկ անձրևոտ օրերում պետք է լսեն Աստծո մասին:

Հայրը պատասխանեց.

- Տղա՛ս, ես այս եղանակին չեմ ուզում դուրս գալ:

Տղան հուսահատ հարցրեց.

- Կարո՞ղ եմ մենակ գնալ:

Հայրը մի պահ լուռ մնաց ու ասաց.

- Կարո՞ղ ես: Ահա՛ թերթիկները: Չգո՛ւշ եղիր:

Որդին, շնորհակալություն հայտնելով, փողոց դուրս եկավ: 11-ամյա տղան շրջեց գյուղի բոլոր փողոցներով՝ թերթիկները բաժանելով իրեն հանդիպած բոլոր մարդկանց:

Ցրտի և անձրևի տակ երկու ժամ քայլելուց հետո վերջին թերթիկը ձեռքին բռնած՝ կանգնեց մի անկյունում, որպեսզի տեսնի, թե ում կարող է տալ: Սակայն փողոցները բոլորովին ամայի էին: Հետո շրջվեց դեպի մոտակայքում գտնվող տունը, մոտեցավ մուտքին, մի քա-

նի անգամ սեղմեց զանգի կոճակը ու սպասեց, բայց ոչ որ դուրս չեկավ:

Վերջապես շրջվեց, որպեսզի հեռանա, բայց ինչ-որ բան կանգնեցրեց նրան: Նա հետ դարձավ, սկսեց ուժգին հարվածել դռանը և անընդհատ սեղմել զանգի կոճակը: Նա շարունակում էր սպասել: Վերջապես դուռը մեղմորեն բացվեց:

Շատ տխուր հայացքով մի տարեց կին դուրս եկավ ու մեղմորեն հարցրեց.

- Ի՞նչ կարող եմ անել քեզ համար, տղա՛ս:

Տղան պայծառ աչքերով ու ժպիտով ասաց.

- Տիկի՛ն, կներե՞ք ինձ, եթե անհանգստացրի ձեզ, ուղղակի ուզում եմ ասել, որ Աստված իսկապես սիրում է ձեզ, և որ ես եկել եմ՝ ձեզ նվիրելու իմ վերջին թերթիկը, որտեղ գրված է Աստծո մեծ սիրո մասին:

Տիկինը պատասխանեց.

- Շնորհակալ եմ, տղա՛ս: Աստված օրհնի՛ քեզ:

Հաջորդ կիրակի առավոտյան հովիվը եկեղեցու ներկաներին հարցրեց, թե ով վկայություն ունի, որը կուզի բաժնեկցել: Եկեղեցու վերջին շարքերից մի տիկին ոտքի կանգնեց ու ասաց.

- Այս եկեղեցում ինձ ոչ քչի ճանաչում: Ես երբեք այստեղ չեմ եկել, նույնիսկ անցյալ կիրակի քրիստոնյա չէի: Վերջերս ամուսինս մահացավ՝ այս աշխարհում ինձ բոլորովին մենակ թողնելով: Անցած կիրակի ցուրտ ու անձրևոտ օր էր, այդպես էր նաև իմ սրտում: Այդ օրը ես հասա ճանապարհի եզրին, քանի որ հույս չունեի և այլևս չէի ուզում ապրել: Հետո աթոռ ու պարան վերցրի, բարձրացա տանս ձեղնահարկ, կապեցի պարանի ծայրը սյուներից մեկին, բարձրացա աթոռի վրա և պարանի մյուս ծայրը պարանոցիս դրի: Այնքան մենակ էի ու հուսահատ, որ պատրաստվում էի կյանքիս վերջ տալու, երբ հանկարծ լսեցի դռան թակոցի ուժեղ ձայնը:

Մտածեցի. «Մեկ վայրկյան սպասեմ, և ով որ է, կհեռանա»: Սպասեցի ու սպասեցի, բայց դռան թակոցն ամեն անգամ ավելի ու ավելի սաստկանում էր: Այն այնքան սաստկացավ, որ չկարողացա անտե-

սել: Ոչ որ երբեք ինձ չէր այցելել: Ես պարանն արձակեցի իմ պարանոցից ու գնացի դեպի դուռը. զանգը դեռ շարունակում էր հնչել: Երբ դուռը բացեցի, չհավատացի տեսածիս. առջևս կանգնած էր հրեշտակային դեմքով մի տղա: Նա ժպտում էր ինձ: Նրա բերանից դուրս եկած խոսքերը կենդանացրին վաղուց մեռած իմ սիրտը:

Երբ փոքրիկ հրեշտակն անհետացավ անձրևի տակ, ես փակեցի դուռը և կարդացի թերթիկի յուրաքանչյուր բառը, հետո բարձրացա ձեղնահարկ, որպեսզի աթոռն ու պարանը հասնեմ: Դրանք այլևս ինձ պետք չէին: Ինչպես տեսնում եք, հիմա ես Թագավորի երջանիկ դուստրն եմ: Ես եկեղեցի եկա և շնորհակալություն հայտնեցի Աստծո այդ փոքրիկ հրեշտակին, ով եկավ ճիշտ ժամանակին և փրկեց իմ կյանքը դժոխքից:

Եկեղեցում բոլորը արտասովում էին: Հովիվը բեմից իջավ, մոտեցավ առաջին շարքի նստարաններից մեկին, որտեղ նստած էր փոքրիկ հրեշտակը, գրկեց որդուն ու անգուսպ լաց եղավ:

Հիշե՛ք, Աստծո պատգամը կարող է մե՛ծ փոփոխություն բերել ինչ-որ մեկի կյանքում: Երբեք մի՛ վախեցեք այն տարածել:

Քաղված

«¹ Եղբայրներս, թող ձեզանից շատերը ուսուցիչներ չլինեն՝ գիտենալով, որ մենք ավելի խիստ դատապարտություն ենք ընդունելու, ² որովհետև բոլորս էլ հաճախ մեղանչում ենք: Եթե մեկը խոսքով հանցանք չի գործում, ապա նա կատարյալ մարդ է, որ կարող է ամբողջ մարմինն էլ սանձել: ³ Տե՛ս, թե ինչպես ենք ձերի բերանը սանձ դնում, որպեսզի նրանք մեզ հնազանդվեն, և կառավարում ենք նրանց ամբողջ մարմինը: ⁴ Ահա, նավերն էլ, որքան մեծ են և սաստիկ հովերից քշվում են, բայց կառավարվում են մի փոքրիկ դեկով՝ այն ուղղությամբ, որ ղեկավարն է ուզում: ⁵ Այսպես էլ, լեզուն մի փոքրիկ անդամ է, որ մեծ բաներով է պարծենում: Մի փոքրիկ կրակ որքան բան է հրդեհում: ⁶ Լեզուն էլ մի կրակ է՝ անիրավության մի աշխարհ: Լեզուն այնպես է դրված մեր անդամների շարքում, որ ամբողջ մարմինն է ապականում և կրակով վառում է մեր գոյության ընթացքը. ու ինքը գեհենի կրակով է բռնկված»:

Հակ. 3:1-6

Ձեռքերիս նայելով

Այսօր ձեռքերիս նայեցի և առաջին անգամ տեսա տարիների թողած հետքը, ժամանակի դրոշմը, նկատեցի, թե ինչպես է սլացել ժամանակը առանց իմ գիտակցության ու թույլտվության: Ձեռքեր, որոնք այժմ նման են տաստիս ձեռքերին, երբ մոտավորապես չորս տարեկան էի: Ձեռքեր, որոնք նման են մորս ձեռքերին, երբ նա քննք-շորեն գրկում էր իմ անդրանիկ որդուն:

Տեսնում եմ տարիքն ու ժամանակը, և դրանց հետ մեկտեղ գալիս է և՛ իսկական խայթոցը, և՛ խորն ակնածանքը: Ցավի խայթոց, որ փորձառել են այս ձեռքերը, թաղված երազների խայթոց, անպատասխան հարցերի խայթոց, կորստի խայթոց, անցյալը վերադարձնել չկարողանալու և միայն առաջ շարժվելու գիտակցության խայթոց, սեփական անգորության խայթոց...:

Այնուամենայնիվ, երբ նայում եմ ձեռքերիս, որոնց վրա արդեն կնճիռներ են հայտնվել, ակնածանքով եմ լցվում ցավի դեմ իմ մղած հարատևության ու տոկունության համար: Երբեք մտքիս ծայրով չէր անցնում, թե հարատևությունն ու տոկունությունն այսքան անհրաժեշտ կլինեին ինձ: Ես ակնածանքով նայում եմ այն էակներին, որոնց լույս աշխարհ եմ բերել և ստացել եմ նրանց սիրելու ու փայփայելու պարգևը: Ես հիացած եմ կյանքով, նրա գեղեցկությամբ, կոպտությամբ և վայրագությամբ:

Ամենից առավել ես ակնածանքով վերաբերվում եմ Աստծուն, ով բոլոր ժամանակներից վեր է և ի հավիտենից գոյ է: Ես ապշած եմ Աստծով, ով Իր սիրող ձեռքերով ինձ Իր մոտ է պահում, և գուցե ամենաշատն այն ժամանակ, երբ ձեռքերս այլևս չեն կարող բռնել Նրա ձեռքը: Եվ սա լավ է: Ժամանակը ծիւխ պես անցնում է մատներինս արանքով, ու շունչս հեռանում է: Մա լավ է, քանի որ Աստծո Որդու գամերով սպիացած ձեռքերը խոստանում են հարություն, վերականգնում ու նորոգում: Ժամանակն ու տարիքը որոշիչ գործոններ չեն իմ կյանքի ու պատմության մեջ, այլ Նա է:

Թրինա Պահաստության

«Remain» ծառայություն

Փորձը ձախողվեց

Մատթ. 9:14-17

Չախողվեց առանց ապաշխարության և առանց հին անձի ու կյանքի դատապարտության «Ավետարանի նեղ ճանապարհի փոխարեն լայն ճանապարհով» փրկություն գտնելու փորձը: Այլ կերպ ասած՝ ձախողվեց էժանագին ու դյուրին հավատի փորձը: Իսկ ինչո՞ւ էր այդպիսի փորձ արվում. եկեղեցիներն ուզում էին «շահել» ավելի շատ մարդկանց, այդ թվում նաև մանուկների և երիասարդոնների, որոնք անխռով կմնային եկեղեցում: Մարդկանց՝ եկեղեցիներում պահելու փորձ էր կատարվում: Մենք ուզում էինք, որ մեր եկեղեցիները լցվեն ոչ թե նրա համար, որ երկինքը լցվի փրկված մարդկանցով, այլ մեր հպարտությունն ու եսասիրությունը բավարարելու, մեզ լավ զգալու և ուրախ մարդկանցով շրջապատված լինելու համար: Այլ կերպ ասած՝ նպատակը ոչ թե Աստծուն և Նրա սուրբ անունը փառաբանելն էր, այլ մեր փառասիրությունը, հարմարավետության և բավարարվածության զգացումը սնելը: Մենք թուլացրինք Ավետարանը՝ Աստծո ճշմարտությունն ու Նրա սրբության օրենքը: Մենք կարծեցինք, թե մեր խելամտությամբ ու հնարքներով, մեր նյութերով և գյուտերով կարող ենք դա անել: Մենք ընտրեցինք ոչ թե Աստվածաշնչի, այլ մեր ճանապարհը: Շատ փորձեցինք, ապավինեցինք մեր ներքին զգացումներին, հույզերին, փորձառություններին և ուշադրություն չդարձրինք Աստծուն ու նրա ճշմարտությանը, որովհետև այդպես էր հարմար մեր ծրագրերին ու կենսակերպին: Բիզնեսի աշխարհում այս երևույթը կոչվում է խարդախություն:

Որտեղի՞ց գիտենք, որ փորձը ձախողվեց: Պատասխանը հստակ է, բայց որտեղի՞ց սկսենք. տա՛ն, եկեղեցո՞ւ, թե՛ աշխատավայրի մասին խոսելուց:

Քրիստոնյաների մեջ պառակտումները զգալիորեն շատացել են: Քրիստոնյա համարվող ընտանիքների շատ երեխաներ գրեթե չունեն սրբության փափագ կամ հոգևոր որևէ բան: Նրանք սիրում են իրենք իրենց ու աշխարհը: Նույնը վերաբերում է մեր եկեղեցիների երիտա-

ասարդներին ու մեծահասակներին: Նրանք ոչ միայն Աստծուն են պաշտում, այլև իրենց աստվածներին: Նրանք ցանկացած պահի հեռանում են Քրիստոսից, հետո նորից նրան ընդունում: Քրիստոսն ու նրա խաչելությունը կարծես դարձել են նրանց քմահաճույքի առարկան: Ըստ Էռնոստի՝ նրանք վերստին ծնունդ չստացած, չփրկված մարդիկ են: Քրիստոսը չի արտացոլվում նրանց կյանքում: Կան մարդիկ, ովքեր ուզում են ճանաչել Քրիստոսին ու նրա հարության գործությունը՝ առանց աշխարհիկ բաները թողնելու և ամեն բան աղբ ու կորուստ համարելու (Փիլիպ. 3:7-10): Նրանք ուզում են առանց անձնուրացության հետևել Հիսուսին, առանց աշխարհիկ սովորությունները թողնելու՝ հավիտենական կյանք ստանալ. *«Ոչ որ նոր կտորից կարկատան չի գցի հին հանդերձի վրա... Նոր գինին նոր տկերի մեջ կլցնեն, և երկուսն էլ կպահվեն»* (Մատթ. 9:15-17):

Այժմ, երբ փորձը ձախողված է, արցունքներ են հոսում: Երեխաները կորչում են, եկեղեցիները փակվում, իսկ զիջումների գնացող մարդիկ չեն հասկանում, թե ինչ են ուզում: Հեշտ հավատի փորձը ձախողված է: Արդյունքները զարմացնում ու ցնցում են մեզ: Մեր արցունքները գրեթե անկարող են որևէ բան փոխել, որովհետև դրանք պետք է ճիշտ ժամանակին թափվեին: Սակայն հույսի մի շող դեռևս կա: Եթե նորից դառնանք Աստվածաշնչին, խոնարհվենք, աղոթենք, Աստծո երեսը փնտրենք և մեր չար ճանապարհներից հետ դառնանք, Աստված երկնքից կլսի մեզ, կների մեր մեղքերը և կբուժի մեր երկիրը (Բ Մնաց. 7:14):

Մենք պետք է թույլ տանք Աստծուն, որ խոսի, իսկ մենք լսենք: Եթե իսկապես սիրում ենք նրան, նրա փառքը, նրա կամքն ու թագավորությունը, ապա մեր կյանքի ուղղությունը կարող է փոխվել: Խոնարհությունը, ապաշխարությունն ու նվիրվածությունը միակ բաներն են, որ կարող են սրբություն բերել մեր կյանքերի, տների ու եկեղեցիների մեջ:

Բայց դրա համար մենք պետք է դառնանք ճշմարտությունը սիրողներ, իսկ ճշմարտությունը մեզ ազատ կդարձնի: Եթե չենք սիրում ճշմարտությունը, չենք օրհնվի, և մեր արցունքներն ու աղոթքները պատասխան չեն գտնի:

Հովսեփի Հովսեփյան

Տիրոջ Յոգին Ինձ վրա է

«Տիրոջ Յոգին Իմ վրա է, որովհետև Նա Ինձ օժեց աղքատներին ավետարանը քարոզելու, Ինձ ուղարկեց սրտով կոտորվածներին բժշկելու, գերիներին փրկություն քարոզելու և կույրերի աչքերը բանալու, ճնշվածներին ազատելու, Տիրոջ ընդունելի տարին հռչակելու» (Ղուկ. 4:18-19):

Եսայի մարգարեի այս խոսքերը Տեր Հիսուս Քրիստոսը բարձրաձայն կարդաց Իր հայրենի Նազարեթ քաղաքի ժողովարանում: Մարգարեությանը հաջորդում են ավետարանչի խոսքերը (տե՛ս հմբ 20), որոնք մե՛ծ նշանակություն ունեն, քանի որ ցույց են տալիս, որ Տեր Հիսուսն ավարտել է ընթերցումն Աստծո Խոսքի հենց այդ հատվածում: Ինչո՞ւ է սա այդքան կարևոր: Պատճառն այն է, որ մարգարեության շարունակությունը մեր Աստծո վրեժխնդրության օրվա մասին է (Եսայի 61:2): Տեր Հիսուսը չէր ուղարկվել աշխարհ «վրեժխնդրության օրը» կամ դրա մոտ լինելը հայտարարելու համար, չնայած, իհարկե, այդ օրն անխուսափելիորեն գալու է, ինչի մասին գրքված է Հայտնության գրքում:

Շնորհի հրաշքն արտահայտվում է Տեր Հիսուսի՝ մարգարեությունից հռչակված ուրախ լուրով այն մասին, որ Տիրոջ տարին ընդունելի է: Սա այն ժամանակն է, երբ Տերը պատրաստակամությամբ ընդունում է կորած մեղավորներին Գողգոթայի խաչի վրա կատարած քավությամբ:

Աստծո երկայնամտության և շնորհի միջոցով այդ ժամանակը շարունակվում է նաև այսօր: Նրանք, ովքեր կիստեսեն Տիրոջ կանչին, կազատվեն «վրեժխնդրության օրից»: Նրանք, ովքեր մեղքի գերության մեջ են, դեռևս կարող են ազատություն ստանալ: Նրանք, ովքեր կույր են ու չեն տեսնում իրենց իսկական վիճակը, դեռևս կարող են տեսողություն ստանալ: Նրանք, ում խիղճը ծանրաբեռնված է, դեռևս կարող են ազատվել այդ բեռից: Սակայն այս առաջարկն ունի ժամկետ: «Այսօր եթե Նրա ձայնը լսեք, մի՛ կարծրացրեք ձեր սրտերը» (Եբբ. 4:7):

Քաղված

Այցելություն Կրաստան

Ուրախություն էր այս տարվա մարտ ամսին կրկին Հայաստան այցելելը: Այս այցի հիմնական նպատակն էր մեր ծառայակիցներին իրախուսելն ու արցախցի փախստականների հետ տարվող աշխատանքների մասին պատկերացում կազմելը:

«Տիրոջ Հոգին Իմ վրա է, որովհետև Նա Ինձ օժեց աղքատներին ավետարանը քարոզելու, Ինձ ուղարկեց սրտով կոտորվածներին բժշկելու, գերիներին փրկություն քարոզելու և կույրերի աչքերը բանալու, ճնշվածներին ազատելու, Տիրոջ ընդունելի տարին հռչակելու» (Ղուկ. 4:18-19):

Մատանայի կողմից փորձվելուց անմիջապես հետո Տեր Հիսուսին տեսնում ենք ժողովարանում Եսայի մարգարեությունից ներքոհիշյալ խոսքերը կարդալիս:

«Տեր Աստծո Հոգին ինձ վրա է, որովհետև Տերն օժեց է ինձ հեզերին ավետարանը քարոզելու. Նա ինձ ուղարկեց կոտորած սիրտ ունեցողներին բժշկելու, գերիներին ազատություն ու կապալներին բանտի բացվելը հայտարարելու. հռչակելու Տիրոջ ընդունելի տարին, և մեր Աստծո վրեժխնդրության օրը՝ մխիթարելու բոլոր նրանց, որ սգում են» (Եսայի 61:1-2):

Հունարեն բնագրում «աղքատներին» բառը վերաբերում է ոչ միայն նրանց, ովքեր գրկված են հարստությունից, այլև նրանց, ովքեր աշխարհում չունեն դիրք, պատիվ և ազդեցություն:

«Ավետարանն աղքատներին հասցնել» կարգախոսը, որ ունենք «Հայ քրիստոնեական առաքելություն»-ում, ինձ համար կենդանի դարձավ այս տարվա մարտ ամսին՝ Հայաստան և Վրաստան կատարած կարճատև այցերի ժամանակ:

Ուրախություն էր Երևանում գտնվել մեր ծառայակիցների՝ Մարտունի ու Անժելայի կողքին, Գյումրիում՝ Աշոտի ու Հասմիկի կողքին, ինչպես նաև խմբի այլ անդամների՝ Անիի, Հայկուհու, Աստղիկի և Աննայի կողքին: Կազմակերպության մեջ ունենք հինգ կամավոր,

ովքեր հավատարմորեն աշխատում են Տիրոջ համար: Առիթ ունեցա Աստծո Խոսքով քաջալերելու նրանց իրենց ծառայության համար:

Հիշարժան էր արցախցի փախստականների հավաքույթը Երևանի «Փարոս» կենտրոնում: Ունեցանք մոտավորապես 50 փախստականներից բաղկացած երկու հավաքույթ, որտեղ Ավետարանը քարոզվեց: Հանդիպումից հետո սնունդի փաթեթներ բաժանվեցին: Նրանց երախտագիտությունն ակնհայտ էր, երբ սկսեցինք հաղորդակցվել նրանց հետ:

Մեկ օր հատկացվեց նաև բժշկական խորհրդատվությանը: Հիշեցի աշխատանքս, որը կատարել էի փախստականների մեջ Սինգապուրի բազայում մոտավորապես 40 տարի առաջ ՄԱԿ-ի UNHCR հովանու ներքո: Փախստականների ճամբարում մենք նաև շաբաթը մեկ անգամ Աստվածաշունչ էինք կարդում:

Աշոտի և Մարտունի հետ Վրաստան այցելեցինք: Մա իմ առաջին այցն էր: Սահմանին մոտ չորս ժամ սպասեցինք: Չէինք իմանում, որ շատ հայեր ճանապարհորդում են Վրաստան: Մենք օրհնվեցինք Թբիլիսիի «Գթություն» մկրտական եկեղեցու անդամների սիրով և հյուրընկալությամբ: Կարիքները մեծ էին՝ և՛ հոգևոր, և՛ նյութական: Այցելեցինք հեռավոր Սամշիլվիձե գյուղը, որտեղ բնակիչների 99%-ը հայ են: Տեղեկացանք, որ այս փոքրիկ և գրեթե մոռացված համայնքն այս տարածք տեղափոխվել է արցախից ավելի քան 100 տարի առաջ: Այնտեղ Ավետարանը քարոզեցինք: Որպես «Հայ քրիստոնեական առաքելություն»՝ մեր փափագն է սպազայում ավելի շատ հաղորդ լինել այս մարդկանց կարիքներին:

Վրաստանից վերադառնալիս մի քանի օր մնացինք Գյումրիում քաջալերելու «Անկյունաքար» կենտրոնի հավատակիցներին: Ավետարանը քարոզվեց նաև «Առաքելություն Հայաստան» կազմակերպության կենտրոնում, որտեղ ճաշ են մատուցում կարիքավորներին:

Խոսքի շուրջ ժամանակ անցկացրինք նաև խանդավառ երիտասարդների հետ, այնուհետև միասին ընթերցեցինք: Այս աշխատանքը մեծացել է, և շուտով միսիոներեկան խումբը պիտի այցելի Երևան՝ հանդիպելու այլ երիտասարդների հետ՝ Աստվածաշնչի ընթերցանության և աղոթքի համար:

Երևանի, Սևահողերի և Գյումրիի Աստվածաշնչյան սերտո-
ղության խմբակները շարունակվում են, և Աստծո Խոսքը հա-
վատարմորեն հռչակվում է ինչպես մեր ծառայակիցների, այն-
պես էլ այցելուների միջոցով: Շատ աղոթք է պետք, մինչ շարու-
նակում ենք աշխատանքը, որպեսզի նոր հրավերներ ստանալիս
կարողանանք վկա լինել Տիրոջ համար և խոնարհաբար քարո-
զել Ավետարանն աղքատներին:

Դոկտ.՝ Դանիել Ջեյմս
Հայաստանի ACM-ի տնօրեն

